ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» «_____» 2022 թվական N ____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետը և 25-րդ հոդվածը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման ամսաթիվը՝ 05.08.2010թ. համարը՝ 222.210.01251, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Երևանի ենթակայության կազմակերպություն, որի գործունեության հիմնական առարկան և նպատակն է Երևան քաղաքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացումն ու զարգացումը, ազգաբնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումն ու տարածումը, Երևան քաղաքում մարզական միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը, Երևանի ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցների մեթոդական աշխատանքների կազմակերմանը աջակցելը և այլն:

Երևանի քաղաքապետի 24.07.2020 թվականի N2205-Ա որոշմամբ հաստատվել է «Երևանի սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը, համաձայն որի՝ նշված ՀՈԱԿ-ի աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում է 16: Նշված ՀՈԱԿ-ն իր 16 հաստիքով ըստ էության կատարում է այն աշխատանքը, որը բխում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գործառույթներից և իրականացվում է այդ բաժնի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքը, ինչպես նաև այն, որ նախատեսվում է աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժինը վերակազմավորել վարչության, որն առավել արդյունավետ կիրականացնի ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում իրավական ակտերով Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից բխող գործառույթները, այդ թվում այն գործառույթները, որոնք հանդիսանում են «Երևան սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ի գործունեության առարկան, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ը լուծարելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու որոշման նյախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ